

Ա.

Ձոհներու քիւր եւ նիւթական վնասներու
կարեւորութիւնը

Ձոհներու թիւի մասին հաստատած եմ որ կայ ահաւելի տարբերութիւն մը պաշտօնական թիւերուն և ուրիշներու կատարած հաշիւին միջև: Հայերը և օտար թերթերու թղթակիցները համաձայն են ընդունելու թիւ մը՝ որ կը յաժի 25 և 30 հազարի մէջ: Գալով կառավարութեան, նախ պաշտօնապէս ցոյց տուաւ իբր 1500 ոչ-խալամ և 1900 խալամ, իսկ այժմ՝ նոր քննութիւններէ վերջ, անիկա կ'ընդունի 600⁰ի համագումար թիւը:

Կառավարութեան թիւերը հիմնուած են քաղաքային իշխանութեան տոմարներուն և կարգ մը վայրերու մուխթարներուն և կրօնականներու տուած ցուցակներուն վրայ: Հարկ չի կայ ըսելու որ քաղաքային իշխանութեան տոմարները չեն կրնար ներկայանայ իբրեւ հաւատ ընծայուելիք ազրիւրներ, և խիստ բացայայտ է որ Ստանայի իշխանութիւնները ամէն տեսակ միջոցներու դիմեցին՝ քրիստոնեայ զոհերու իրական թիւը պահելու համար: Ատկէ զատ բազմաթիւ վայրերու մէջ, նոյն ինքն քահանաները և մուխթարները կը գտնուին սպաննուածներուն մէջ: Օրինակէ համար, Համիտիէի մէջ 7 հոգի յաջողած են պահուելու տեղ մը գտնել, 8 հոգի ալ սպաստան փնտուած են Մ. Sabatier կոչուած ֆրանսացիի մը գործարանին մէջ, և բոլոր մնացեալը, — հաշուուած 2000 հոգի՝ օտար թղթակիցներէ, — ջարդուած են, մէջը ըլլալով քահանան և մուխթարը:

Պէտք է նկատի ունենալ որ՝ այդ եղանակին գործաւորներու ահագին թիւ մը եկած էր այս գաղային